

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ծրագրի անվանում

Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» Ռեսուրսների արդյունավետություն և մաքուր արտադրություն ծրագիր»

Պաշտոն

ՌԱՄՄ գնահատման Փորձագետ

Պայմանագրի ձև

Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր

Իրականացման վայր

Երևան, Հայաստան

Ծրագրի նկարագիրը

Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի նպատակն է օգնել Արևելյան գործընկերության վեց երկրներին (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Մոլդովայի հանրապետություն, Ուկրաինա) պահպանել և արդյունավետ օգտագործել բնական կապիտալը, ամրապնդել մաքուր շրջակա միջավայրի բարեկեցությունը, ինչպես նաև խթանել տնտեսական աճը:

Համախմբելով շրջակա միջավայրի և տնտեսական դերակատարներին՝ «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագիրն օգնում է իրականացնել քաղաքական և օրենսդրական փոփոխություններ, ավելի կանաչացնել պլանավորման և ներդրումների գործընթացը, դրանով իսկ խթանելով նորարարական տեխնոլոգիաների ներգրավումը, նոր բիզնես մոդելների ընդունումը և կանաչ աշխատատեղերի ստեղծումը: Այն նաև խթանում է շրջակա միջավայրի բարելավված կառավարմանը, պահպանվող տարածքների ու անտառների բարելավված կառավարմանը և կայուն առևտրին:

Գործողությունները կիրականացվեն 2019-2022 թվականներին՝ ներգրավելով հինգ իրականացնող կազմակերպություններ. ՏՀԶԿ, ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն, Համաշխարհային բանկ: Այն ուղղված կլինի գործընկեր երկրների կողմից սահմանաված առաջնահերթություններին և ընդհանուր

համագործակցության նպատակներին համապատասխան շոշափելի և հասանելի արդյունքների ստեղծմանը:

Հիմնված լինելով նախկինում համատեղ իրականացված «Կանաչ տնտեսություն Արևելյան հարևանության տարածաշրջանում» (EaP GREEN) (2013-2017) ծրագրի կարևոր ձեռքբերումների վրա, **որտեղ 90 մասնակից ՓՄՁ-ներ** ցույց տվեցին UNIDO - ի ՌԱՄԱ մոտեցման արդյունավետությունը, UNIDO-ն կշարունակի խթանել և զարգացնել ազգային կարողություններ, հնարավորություն ընձեռելով փոքր և միջին ձեռնարկություններին անցում կատարել ռեսուրսների արդյունավետության և մաքուր արտադրության: Բացի այդ, UNIDO- ն կսահմանի այն հնարավորությունները, որոնք կարող են օժանդակել ազգային և տարածաշրջանային մակարդակներով, ձեռնարկությունների, ինչպես նաև կառավարության և քաղաքացիական հասարակության միջև շրջանաձև տնտեսության հնարավորությունների ու առավելությունների վերաբերյալ շրջանաձև արժեշոթանների ստեղծմանը, ինչպես նաև տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը:

Ծրագրի իրականացումը հիմնված է ՌԱՄԱ մեթոդաբանության և ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող EaP GREEN RECP ցուցադրական ծրագրի (www.recp.am) փորձի վրա՝ նպաստելով երկրում ՓՄՁ-ների արտադրողականության, արտադրանքի որակի և մրցունակության բարձրացմանը: Գնահատման արդյունքները և ՌԱՄԱ միջոցառումների իրականացումը կնպաստեն նաև շրջանաձև տնտեսության ներդրման առավելությունների ցուցադրմանը ազգային մասշտաբով:

Ազգային իրականացնող գործընկերը UNIDO - ի կողմից, «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի շրջանակներում, մրցութային հիմունքներով ընտրված կազմակերպություն է, Հայաստանում ՌԱՄԱ ծրագրի գործունեությունը իրականացնելու համար: Այն պատասխանատու է ընտրված արտադրական ձեռնարկություններում ռեսուրսների արդյունավետության գնահատման արդյունքում ՌԱՄԱ բիզնես փաթեթների տարածման համար: ԱԻԳ թիմը ներառում է Ազգային Համակարգողին, երկու Տեխնիկական փորձագետներին, ինչպես նաև Հաղորդակցման փորձագետին և ադմինիստրատիվ անձնակազմին: Այն ղեկավարվում է Կովկասի Տարածաշրջանային բնապահպանական Կենտրոնի Հայաստանյան գրասենյակի (RECC - Armenia) կողմից:

ՆԱԽԱԳԾԻ ՈՒՈՐՏԸ

ՌԱՄԱ Փորձագետը գործելու է Հայաստանում **«ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի - Ռեսուրսների արդյունավետություն և մաքուր արտադրություն»** ծրագրի Ազգային Համակարգողի ուղղակի ղեկավարությամբ, սերտորեն համագործակցելով նաև նախագծի Տեխնիկական փորձագետների հետ իրականացնելու համար ՌԱՄԱ գնահատումներ ընտրված արտադրական ՓՄՁ-ների համար: Առաջադրանքը

ներառում է ներգործարանային գնահատում՝ համաձայն ՌԱՄԱ մեթոդաբանության, ներառյալ ռեսուրսների տվյալների վերլուծությունը, անարդյունավետության գնահատումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցման և արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների տեխնիկական, տնտեսական և շրջակա միջավայրի գնահատումը:

Առաջադրանքը ներառում է նաև ձեռնարկությունների անձնակազմի մարզում, ընդունելով ՌԱՄԱ ազդեցության գնահատումը, ինչպես նաև ցուցադրական ընկերություններում հայտնաբերված միջոցառումների իրականացման մոնիտորինգ: Ակնկալվում է, որ ՌԱՄԱ փորձագետը կնպաստի Հայաստանում ՌԱՄԱ ցուցադրական ծրագրի ընդհանուր խթանմանը:

ՌԱՄԱ գնահատման փորձագետը կաշխատի այլ ՌԱՄԱ գնահատման փորձագետի հետ՝ երկու հոգուց բաղկացած թիմում, երկու ընտրված ՓՄՁ-ների հետ՝ փոփոխելով առաջատար և օժանդակ փորձագետի դերերը յուրաքանչյուր ՓՄՁ աուդիտի համար:

ՌԱՄԱ գնահատման փորձագետը պատասխանատու է և պետք է իրականացնի հետևյալ առաջադրանքները.

- 1) Մասնակցել ՌԱՄԱ ԱԻԳ Տեխնիկական փորձագետների կողմից կազմակերպվող և տրամադրվող մարզում-դասընթաներին,
- 2) Ղեկավարել (նշանակված ընկերությունում) և աջակցել առաջատար մասնագետին (մեկ այլ նշանակված ընկերությունում)՝ դերերը փոխանակելով, հետևյալում.
 - ա) Նվազագույնը 3 ՌԱՄԱ մարզում-դասընթացների իրականացում ընտրված ՓՄՁ-ներում,
 - բ) Ներգործարանային գնահատման իրականացում ընտրված ՓՄՁ-ներում՝ համաձայն ՌԱՄԱ ուղեցույցների և մարզչական մոդուլների,
 - գ) Ելակետային տվյալների հավաքագրում, անարդյունավետության պատճառների արմատական վերլուծություն, ինչպես նաև ծախսերի խնայողություն կամ արդյունավետության բարձրացում առաջացնող և ընկերության շրջակա միջավայրի վրա ազդեցության կրճատմանը նպաստող ՌԱՄԱ տարբերակների նույնականացում և գնահատում,
- 3) Պատրաստել երկու ՓՄՁ-ների համար երկու ներգործարանային գնահատման հաշվատվություն, փոխանակելով առաջատար և օժանդակող փորձագետի դերերը մեկ այլ ՌԱՄԱ փորձագետի հետ: Հաշվետվությունները պետք է ներառեն մշակված ՌԱՄԱ վերլուծությունը և հայտնաբերված ՌԱՄԱ տարբերակների կատալոգը՝ դրանց գնահատված առավելություններով և ներդրումներով հանդերձ՝ համաձայն գնահատման և առաջարկվող գործողությունների ծրագրի:

- 4) Մեկ ընկերությունում առաջնորդել և երկրորդ ընկերությունում աջակցել մոնիտորինգի պլանի մշակմանը և իրականացնել այցեր գնահատված ընկերություններում՝ գնահատելու ՌԱՄԱ իրականացման առաջընթացը և ազդեցությունը, ինչպես նաև պատրաստել մոնիտորինգի զեկույցներ:
- 5) Գնահատել և վավերագրել ՌԱՄԱ կատարման արդյունքները երկու նշանակված ընկերություններում և կազմել առանձին ձեռնարկությունների բիզնես փաթեթներ՝ ցուցադրելով ՌԱՄԱ կիրառումը: Ձեռք բերել ընկերությունների կառավարման վավերացում բիզնեսի փաթեթների հանրայնացման համար:
- 6) Աջակցել Բիզնեսի և Ֆինանսների զարգացման փորձագետին, որը կհետևի ընկերություններում ՌԱՄԱ թիմերի մարզում-դասընթացներին, աջակցելու համար ֆինանսական կարիքների բացահայտմանը, պատասխանատու լինելով ընտրված ՌԱՄԱ միջոցառումների խորը տեխնո-տնտեսական գնահատման և ֆինանսավորման հնարավորությունների զարգացման համար: Ապահովել տվյալներ ֆինանսական վերլուծության համար՝ ՌԱՄԱ գնահատումների և Ձեռնարկության գործողությունների պլանի արդյունքում ստեղծված ՌԱՄԱ խնայողությունների կատալոգի համար:
- 7) Մասնակցել ծրագրի միջոցառումներին, ինչպիսիք են ՌԱՄԱ/Շրջանաձև տնտեսություն գիտաժողովներ, թեմատիկ իրազեկման և փորձագետների հանդիպումներ:
- 8) Ակտիվ ներդրում ունենալ Հայաստանում ՌԱՄԱ առաջխաղացման գործում, մասնավորապես կիսվելով ՌԱՄԱ գնահատումներից ստացված արդյունքներով և փորձով, ինչպես նաև նպաստելով հայաստանյան արդյունաբերության համար ՌԱՄԱ հնարավորությունների վերաբերյալ ընդհանուր եզրակացությունների և առաջարկությունների մշակմանը:

ՎԵՐՋՆԱԴՅՈՒՆՔՆԵՐ

1.	<p>ՌԱՄԱ գնահատումների երկու տեխնիկական հաշվետվություն (անգլերեն և հայերեն, որոնք պետք է հաստատված լինեն Ծրագրի համակարգողի կողմից), երկու ընտրված ընկերությունների համար, որոնք ներառում են.</p> <p>1) Վերջնական ամբողջական գնահատման զեկույց՝ անգլերեն և հայերեն լեզուներով, ներառյալ գույքագրման և պատճառների վերլուծության հիմքը և արդյունքները, ՌԱՄԱ միջոցառումներով գնահատված խնայողությունների կատալոգը, ընկերության գործողությունների պլանը և մոնիտորինգի պլանը,</p> <p>2) Ամփոփ գնահատման զեկույց անգլերեն և հայերեն լեզուներով,</p>
----	--

	<p>3) Գնահատված ընկերության ընդհանուր-աղյուսակային հաշվետվությունը՝ օգտագործելով «ՌԱՄԱ գնահատման արդյունքների տվյալները» (ձևանմուշները կտրամադրվեն),</p> <p>4) ՓՄՁ-ի մարզումների վերաբերյալ հաշվետվություն,</p> <p>5) Ընկերության բիզնես փաթեթների հավաքածուն (երկու էջ հայերեն և անգլերեն լեզուներով) ընկերության կողմից պատրաստված և հաստատված առցանց հրապարակման համար,</p>
2.	<p>6) Տվյալների գլխավոր հավաքակազմի համար՝ գնահատված ընկերություններում կանոնավոր շրջայցեր կատարելու վերաբերյալ (յուրաքանչյուր ընկերության համար առավելագույնը 3 շրջայց), և հաշվետվություններ ՌԱՄԱ միջոցառումների կատարման վերաբերյալ՝ շրջայցի հետագա հաշվետվությունների միջոցով (յուրաքանչյուր այցի և վերջնական ամփոփման) ներդրում անելով մոնիտորինգի տվյալների բազայում,</p> <p>7) Վերջնական հաշվետվություն (ներ):</p>
3.	<p>Բավարար ներդրում համակարգման գործողություններում, ինչպես նաև Ազգային համակարգողի կողմից պատրաստվող ամփոփ փաստաթղթերի, գնահատումների և հոդվածների պատրաստման գործում:</p>

ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁ

Կրթություն: Համալսարանի գիտական աստիճան կիրառական գիտություններում, ճարտարագիտության, բնական և (կամ) բնապահպանական գիտություններ կամ սերտորեն առնչվող ոլորտներում:

Մասնագիտական փորձ. Պահանջվում է հիմնավորված փորձ ինժեներիայում (քիմիական, արդյունաբերական, շրջակա միջավայրի, մեխանիկական կամ հարակից), բնապահպանական գիտություններում, արդյունաբերական էկոլոգիայում կամ հարակից ոլորտներում:

- Նվազագույնը 5 տարվա աշխատանքային փորձ: **Հիմնավորված փորձ ՌԱՄԱ մեթոդաբանության/արդյունաբերական գործընթացների օպտիմիզացիայի,** շրջակա միջավայրի կառավարման կամ հարակից առարկաների վերաբերյալ:
- Նվազագույնը **3 տարվա աշխատանքային փորձ արդյունաբերական հատվածին ծառայությունների մատուցման ոլորտում** շրջակա միջավայրի, արտադրողականության, որակի համակարգերի կամ հարակից առարկաների բնագավառներում:
- Գերազանց միջանձնային և հաղորդակցման հմտություններ, ներառյալ գաղափարները և բանավոր, և գրավոր արդյունավետ արտահայտելու ունակությունը:
- Հայաստանում բիզնեսի/արտադրության ոլորտի գործունեության իմացություն: Հետևյալ հատվածներից առնվազն մեկի փորձը պարտադիր է.

սնունդ/գյուղատնտեսական ապրանքների արտադրություն, շինանյութեր և/կամ քիմիական նյութեր, ձկան արտադրության և պլաստիկ թափոններ/վերամշակում:

- Մայրենի/հայերենի իմացություն, տեխնիկական անգլերենի գրավոր և բանավոր լավ իմացություն և տվյալների վերլուծության հմտություններ:
- Ժամկետների բավարարման՝ որակյալ ծառայությունների ժամանակին առաքման ունակություն:

Հմտություններ:

Առաջադրանքները նախատեսված են ազգային տեխնիկական փորձագետների համար, որոնք ունեն հիմնավորված հետաքրքրություն և ծանոթ են կայուն արտադրության և արդյունաբերական ռեսուրսների արդյունավետությանը: Դիմողը պետք է ցույց տա գիտելիքներ ու փորձ փոքր և միջին ձեռնարկություններին դասընթացների և (կամ) խորհրդատվական ծառայությունների մատուցման հարցում: Նա պետք է թիմային խաղացող լինի և ցույց տա իր իսկ նախաձեռնությամբ աշխատելու ունակություններ: Նա պետք է ունենա հայերեն լեզվով գերազանց բանավոր հաղորդակցվելու, վերլուծական և հաշվետվություն կազմելու հմտություններ, ինչպես նաև տեխնիկական անգլերենի լավ իմացություն:

Կառավարման և առաջնորդության կարողություններ.

- Արդյունքների նկատմամբ ուժեղ կողմնորոշում,
- Խնդիրների արդյունավետ լուծում,
- Կարողությունների զարգացման և դյուրացման հմտություններ,
- Հետևողական մոտեցում աշխատանքին՝ եռանդուն և դրական-կառուցողական վերաբերմունքով,
- Ճկուն և պատասխանատու կողմնորոշում դեպի հաճախորդը:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ՌԱՄԱ գնահատման փորձագետը աշխատանքների ընթացքում պետք է սերտորեն համագործակցի և խոչհրդատվություն տրամադրի Ծրագրի ազգային համակարգողի, ԱԻԳ թիմի, տեխնիկական փորձագետների, բիզնեսի և ֆինանսների զարգացման, ինչպես նաև հաղորդակցման փորձագետների հետ:

Հաշվետվությունների պարբերականությունը կորոշվի ըստ աշխատանքային ծրագրի: